# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Անթև բաճկոն | Անթև բաճկոն | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Անթև բաճկոնի արտաքին տեսքը կից ֆայլում: Մինչև գնային առաջարկ ներկայացնելը մասնակիցը պարտադիր պետք է նախապես ծանոթանա Պատվիրատուի կողմից ներկայացված հագուստի նմուշին և համաձայնեցնի կտորի տեսակն ու գույնի երանգը: Անթև բաճկոնը /ժիլետ/ կարվում է 110 – 140 գր/մ² մակերեսային խտությամբ Դուսպո կամ Տասլան տեսակի ջրակայուն կտորից: Բաճկոնի կտորի գույնը սև: Առաջամասը և ետևամասը մշակվում են զուգահեռ 4 հատ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հորիզոնական զարդակարերով` հիմնական կտորի և լցոնիչի ամրացման համար: Ժիլետի ներսի հատվածը մշակվում է աստառով: Բաճկոնի առաջամասում և ետևամասում որպես տաքացնող ներդիր տեղադրվում է 200 գ/մ2 խտությամբ 15 մմ հաստության սինտեպոն որը մգդակված է սև գույնի մետաքսյա աստառի հետ, որի մակերեսային խտությունը պետք է կազմի ոչ պակաս 55-60 գ/մ2 : Բաճկոնի ներքևի կողային հատվածում պետք է լինեն 45 աստիճանի տակ 2 ներսի գրպան, որոնք փակվում են շղթա կոճգամով և մուտքի հատվածը մշակվում է մոտ 2 սմ լայնությամբ մանժետներով: Բաճկոնի օձիքը կանգուն է, լցոնիչով, եզրային մասի անկումային մշակմամբ: Բաճկոնը կոճկվում է «տրակտորային» տիպի մետաղական բարձրորակ շղթայով: Բաճկոնի կրծքավանդակի ձախակողմյան հատվածում` ասեղնագործման եղանակով տեղադրվում է Հանրային հեռուստաընկերություն փոքր տարբերանշանը, իսկ մեջքի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հատվածում՝ մեծ տարբերանշանը: Դրանց ֆայլերը կտրամադրվեն Պատվիրատուի կողմից: Բաճկոնի ներսի կողմում՝ ներքևից 15 սմ բարձրության վրա կարվում է նեյլոնից տեղեկատվական պիտակ, որի մեջ նշվում են արտադրողի տվյալները / վավերապայմանները, հագուստի չափսը, Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 2 – 3 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Անհրաժեշտ քանականություններն ըստ մոտավոր չափսերի. XS – 2 S – 6 M - 8 L - 12 XL - 9 XXL - 4 XXXL – 3 4XL - 1 Պարտադիր պայման է յուրաքանչյուր աշխատակցի չափսերի անհատական չափագրումը Մատակարարի կողմից: Մատակարարումից 10 օր առաջ մատակարար կազմակերպությունը հասատատման է ներկայացնում արտադրված նմուշը: Մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ՝ գործվածքի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից մատակարարին: Անհրաժեշտություն առաջանալու դեպքում Պատվիրատուի պահանջով մատակարարի հաշվին կարող է կատարվել լաբորատոր ստուգում: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | | | |